

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարեկանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և առիթ օրերէն):

Յայտարարութիւն ընդունւում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւրանչուր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹԻՒՆ

Օրէնսդրութիւն և մամուլ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Ապօրինական երեխաների մասին նոր օ-
րինագիծ Ռուսաստանում. Հայուհեաց բարե-
գործական ընկերութեան ժողովը. «НОВОЕ ВРЕ-
МЯ» լրագիրը Աղամանի մասին. Նամակ խմբա-
գրին. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Պարսկական ծխախոտի բէժին. Տեղեկութիւններ
թիւրքաց. Հայաստանից. Արտաքին լուրեր.—
ԽԱՌՆ ԼՈՐԵՐ.—ՀԵՌԱՎԻՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅ-
ՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՕՐԵՆՏԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՍՈՒՆ

Օրէնսդրութիւնը նպատակ ունի կանո-
նաւորել մարդկային հասարակութեան յա-
րաբերութիւնները դէպի պետութիւնը և
նորից կողմից կանոնաւորել քաղաքացիների
միմեանց մէջ ունեցած հասարակական յա-
րաբերութիւնները: Ուրեմն ամենայն օ-
րէնսդրութիւն աչքի առաջ ունի հասարա-
կական կեանքի բարորութիւնը, մարդկային
թէ հաւաքական և թէ անհատական կը-
շանկութիւնը:

Բայց օրէնսդրութիւնն անկարող է իր
այդ նպատակին հասնել եթէ նկատի չառ-
նի յայտնի ժամանակի հասարակական
կեանքի պայմանները: Բայց որովհետեւ մի
որոշ հասարակութեան կեանքի պայմաննե-
րը ժամանակի ընթացքում փոփոխւում են,
դրա հետ միասին փոփոխւում են և հասա-
րակական պահանջները.—ուրեմն հասա-
րակական կեանքի պայմանների և ժամա-
նակի պահանջների փոփոխութեան համե-
մատ պիտի փոփոխվի բարեփոխվի կա-
տարեազդեցիկ և օրէնսդրութիւնը:

Սակայն ի՞նչ միջոցով օրէնսդրութիւնը կա-
րող են տեղեկանալ թէ հասարակական
կեանքի պայմանների փոփոխութեան և թէ ժա-
մանակակից պահանջների տարբեր լինելու
մասին, եթէ ոչ անընդհատաբար ականջ
դնելով հասարակաց կարծիքի արտայայ-
տութեանը: Իսկ հասարակաց կարծիքի տը-
րամադրութեան և պահանջների ամենաճշդ
արտայայտիչներն են անտարակոյս մա-
մուլն է:

Ձգայուն, դիտող, ապաւորվող, հասարա-
կական կեանքը և նրա մէջ առաջ եկող փո-
փոխութիւններն ուսումնասիրող, նրա մէջ
ծնվող նոր նոր հասարակաց պահանջների
արտայայտող մամուլը՝ ահագին օգուտ և
բերում օրէնսդրութեանը, քանի որ մատնա-
ցոյց է անում այն կենսական փոփոխու-
թիւնների վրա, որոնք ժամանակի ընթաց-
քում հասարակութեան կեանքի մէջ առաջ
բերվող պայմանների տարբերութիւնը, դը-
նում են օրէնսդրութեան առջև անողորմ
պահանջ՝ անդադար վերանորոգելու, բա-
րեփոխվելու, կատարելագործվելու: Համե-
մատ կեանքի նոր և հետզհետէ բարդվող,
բազմակողմանի դարձող պայմանները...

Վերցնենք մի օրինակ: Վաղուէ է արդէն,
որ առաջ մամուլը ընտանիքի ապօրինա-
ծին մանուկների հասարակական անվախ-
թար և իրաւագուրջ վիճակը Ռուսաստա-
նում և անընդհատաբար տարիների ըն-
թացքում մշակելով այդ հարցը, արձագանք
ի դառնում հասարակական կեանքի մէջ
դարձադող նոր պայմանների և այդ պայ-
մաններից ծնվող նոր պահանջների:

Եւ ահա օրէնսդրութիւնը, ականջ դնե-
լով մամուլի ձայնին, իրաւ ջանք է անում
այժմ բարեփոխել այն քաղաքացիների ի-
րաւագուրջ վիճակը, որոնք ապօրինի պը-
սակներէն ծնվելով կրում են իրանց վրա
իրանց ծնողների արած յանցանքը:

Եւ ճշմարիտ, ինչո՞վ է մեղաւոր մանու-
կը, որը բնութեան անփոփոխ օրէնքներին
համեմատ ծնվել է երկու անհասանքի բը-
նական յարաբերութիւններից, այնուհետեւ

իր ամբողջ կեանքի ընթացքում կրելով պե-
տութեան իրաւագուրջ քաղաքացու վիճա-
կը միայն այն պատճառով, որ այն մարդն
ու կրնի, որոնք իր ծնողներն են եղած,
կապված չէին պետական օրէնքով ճանաչ-
ված օրինական երեխայի պատկով: Բնու-
թիւնը, որը ամենեւին ուշադրութիւն չէ
դարձնում պետական օրէնքների վրա, ըս-
տեղծել, աշխարհ է թերեւ նրան, ճիշդ այն-
պէս, ինչպէս ստեղծում աշխարհ է բե-
րում բոլոր մանուկներին, բայց մանուկը,
այնու ամենայնիւ, իր ամբողջ կեանքը
պէտք է իր իրաւագուրջ վիճակով տուժէ
իր ծնողների յանցանքը պետութեան ձեռ-
քով սահմանված օրէնքի համեմատ:

Ծնողներն իրանց արածով չեն մեղանշել
բնութեան դէմ, այլ միայն մեղանշել են
սահմանված օրէնքի դէմ.—իսկ մանուկը
ոչ բնութեան դէմ է մեղանշել, ոչ էլ օրէն-
քի դէմ, իր կամքին հակառակ, բնական
անողորմ օրէնքի գորութեամբ աշխարհ
գալով...

Եւ այնու ամենայնիւ այդ անմեղը, այդ
անպատասխանատուն է տուժում իր ծնող-
ների օրինազանցութիւնը:

Մինչև այժմ օրէնսդրութիւնը չէր էլ
թոյլ տալիս անհարգաւոր ծնողներին, չը
նայելով իրանց ցանկութեանը որդեգրել
իրանց ապօրինածին մանուկին: Այժմ ար-
դարադատութեան միմիայն նոր հրատա-
րակած օրէնքի հիման վրա գտնվող յարա-
բերութեան փոփոխութեան հետեւ լինելով
անհասանքներն որդեգրել իրանց ապօրինածին
մանուկին՝ իրար մէջ պատկի արարողութիւ-
նը կատարելով: Դա, անտարակոյս ահա-
գին մի քայլ է դէպի առաջ, որ անում է
օրէնսդրութիւնը, ղեկավարվելով մարդասի-
րութեան և արդարութեան զգացմունքով:

Բայց դա, մեր կարծիքով, դեռ ևս բա-
ական չէ: Եւրա, օրէնքը մի մեծ քայլ է
արել դէպի առաջ, մի կը ցոյց տալով ծը-
նողներին իրանց ապօրինածին մանուկին
իրաւագուրջ քաղաքացու իրաւաւոր քա-
ղաքացի դարձնելու... Սակայն օրէնքն այդ-
անց էլ բոլոր դէպքերը ծնողներին է տալիս,
նրանց կամքին է յանձնում օրինացնելու
կամ ապօրինի վիճակի մէջ թողնելու իրանց
երեխային: Եթէ ծնողներն ամուսնանան,
պատկից դուրս ծնված երեխան օրինական,
հարգաւոր կը դառնայ. եթէ չեն ուզենայ
պատկից.—մանուկն ապօրինածին, ուրեմն
դարձնալ իրաւագուրջ քաղաքացի կը մնայ
մինչև իր կեանքի վերջը: Եւ շատ անգամ
ծնողները, որքան էլ ցանկանան, չեն կարող
ամուսնանալ. շատ անգամ մարդը մի աղջ-
կայ հետ կապվելուց, և նրանից երեխայ
ունենալուց յետոյ,—թողնում է մօրն ու ե-
րեխային և ամուսնանում է մի այլ կնոջ
հետ: Եւ մանուկը դարձնալ ֆիւմուս է ապօ-
րինածին:

Օրէնքը ոչ թէ միայն պէտք է ծնողների
ազատ կամքին թողնէ ամուսնանալ կամ
չամուսնանալ օրինացնել կամ չօրինացնել
իրանց ապօրինածին զաւակին, բայց, մեր
կարծիքով, դարձնալ մի քայլ պէտք է անի
դէպի առաջ, այն է ծնողների կամքի դէմ
էլ անմեղ-մեղաւորի, այսինքն մանուկի
պաշտպան հանդիսանալ, միջոց տալով ա-
պօրինածին մանուկի մօրը, օրէնքի գորու-
թեամբ, պահանջել, որ մանուկին հայրը
ձանաչվի, երբ այդ վերջինը խուսափում է
այդ պարտաւորութիւնից:

Գտնէ այդ են պահանջում Ֆրանսիացի
ամենաերեւելի իրաւաբանները, այդ իրաւա-
ցի, այդ արդար, այդ մարդասիրական օրի-
նական պահանջին մօր կողմից «le droit
de la recherche de la paternité», այսինքն
«հայրութիւնի փնտռելու կամ ապացուցանե-
լու իրաւունքը» անուն տալով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՊՐԻՆԱՅԻՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՆ ՆՈՐ ՕՐԻՆԱ-
ԳԻՒ ՌՈՒՍՍՏԱՆՈՒՄ

Ռուսաց լրագիրներում հրատարակված է հե-
տեւալ նոր օրէնսդրութիւնը:

Ապօրինական երեխաների ծնողները, մինչև և-
րեխաների չափաւոր դառնալը, ենթարկուում են
172-որդ յօդուածում բացատրված պարտաւորու-
թիւններին: Եթէ ամուսնութիւնը անվաւեր և
ապօրինի է ճանաչվել, դատարանը կարող է Թա-
գաւոր կայսրի հայեցողութեամբ ենթարկել այդ
ամուսնութիւնից ծնված երեխաների համար օրի-
նական երեխաներին յատկացրած իրաւունքների
ճանաչման խնդրելու: Այն դէպքում եւ, երբ
քրէական դատարանի վճիռը յետոյ, հոգեւոր դա-
տարանը խնդ է կողած ամուսնական կապերը,
եթէ միայն ամուսնութեան միջոց լսելի կամ խա-
բերակցական կերպով է գրաւված եղել դէպի ա-
մուսնութիւնը,—դատարանը կարող է ինքդատա-
տոյց լինել Թագաւոր կայսրի մօտ անմեղ ամու-
սնութիւնի համար:

Գրեւորականների երեխաները, որոնք ծնվել են
ամուսնութիւնից դուրս, օրինական են ճանաչ-
վում իրանց ծնողների ամուսնութեամբ և այն
օրից օրինական են դառնում, երբ իրանց ծնող-
ների պատկի կայսրով է: Եթէ այնուհետեւ այդ
պատկի խնդ, օրինականացրած երեխաների իրա-
ւունքները ճանաչվում են որպէս օրինական
պատկից ծնված զաւակների իրաւունքներ:

Բոլոր դատարարների անձանց, առանց խորու-
թեան սեռի, եթէ նրանք չունեն ոչ սեփական,
ոչ էլ որդեկրած օրինական զաւակներ, խոյատու-
րում է որդեգրել իրանց սաներին, դառնալ երե-
խաներին կամ օտար զաւակներին: Որդեգրողը
պէտք է լինի ոչ պակաս քան 30 տարեկան, իր
որդեգրածից առնուազն 18 տարով մեծ լինի և
պէտք է անկախ վայելի իր քաղաքացիական
լիաւոր իրաւունքները: Զէ թոյլատրվում ոչ քրի-
ստոնականներն որդեգրել քրիստոնեաց զաւակներին,
նմանապէս չէ թոյլատրվում քրիստոնեաներին
որդեգրել ոչ քրիստոնեաց զաւակներին:

Նայելով թէ ինչ դատարարին է պատկանում
որդեգրող.—նրա որդեգրածն էլ համարվում է
նոր դատարարին պատկանող: Որդեգրել ձեռք
է բերում իր ծնողների բարեխաւտակ կալերի
վրա իրաւունքը և եթէ որդեգրող ծնողները
տղայ-զաւակ չունեն, արեւմտ սեռի որդեգրելը
հաւատար չափով իրաւունք է ստանում այդ ծը-
նողների օրինական աղջկաների հետ նոյն ծնող-
ների փառանդական կալեր վրա: Որդեգրելը ի-
րաւունք չունեն չարունակել ստանալ իրանց որ-
դեգրող ծնողներին յատկացրած թոշակները կամ
միասնաւոր օժանդակութիւնները:

ՀԱՅՈՒՀԵՍՑ ԲԱՐԵԳՐՈՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Ապրիլի 7-ին կայացաւ Հայուհեաց Բարեգոր-
ծական Ընկերութեան ընդհանուր ժողովը, միմի-
այն 30 անդամների ներկայութեամբ: Երբ նիստը
բացվեց, քարտուղարը կարդաց անցեալ ընդհա-
նուր ժողովների արձանագրութիւնները, որից յե-
տոյ վարչութեան անդամ օրիւրը Մովսէսիան
ճանաչեց զարգացող վարչութեան միամտաց գործունե-
ութեան հետ: Երբ վերջացրեց նախագահը դարձաւ
ժողովին ասելով՝ «արձանագրութիւնն էլ կարդա-
ցին, նախահաշիւն էլ. այժմ ու ինչ ունի ասելու
թող ասի»: Քարտուղարը նկատեց, որ նախահա-
շիւը չէր կարդացած, այլ վարչութեան գործունեու-
թեան տեղեկագիրը, և ապա կարդաց 1891 թվի նա-
խահաշիւը, որից երեւաց հետեւեալը: Մ առաջ պատ-
վում է մշտական անդամներէն՝ 200 ռ., իսկական
անդամներէն՝ 960 ռուբլի, պարահանդաններէն և
ներկայացուցիչներէն՝ 2,000 ռ., նուէրներ՝ 300 ռ.,

տոկոսներ՝ 600 ռ., Ս. Նշանի դպրոցից արդիւնը՝
300 ռ., կար. ու ձեռ. դպրոցից՝ 840 ռ.: Ընդամե-
նը 5,200 ռուբլի: Մ ա խ ա Ս. Նշանի դպրոցին՝
2,250 ռ., կար. ու ձեռ. դպրոցին՝ 2,140 ռ., այլ
և այլ ուսումնարաններին՝ 500 ռ., զիւսնական
ծախս՝ 10 ռ., մանր ծախս՝ 100 ռ.: Ընդամենը
5,000 ռուբլի:

Նախահաշիւ կարդալուց յետոյ սկսվեցան վի-
ճաբանութիւնները, որոնք, զգուշորապէս տիկին
Լիզիա Թամաշեանի արած նկատողութիւնների
և առաջարկութիւնների շնորհով, բաւական տաք
կերպարանք ստացան: Խօսք խնդրելով, յարգելի
տիկինն առաջարկեց, մի շարքով առաջ ուղար-
կել տպած հաշիւը անդամներին, որ նրանք վաղ-
օրօք ծանօթանան գործի հետ, թող ապա, որ Ժո-
ղովներին ներկայ լինեն կողմնակի անձինք, ո-
րոնք գոցէ այդպիսով կը սկսեն հետաքրքրվել
ընկերութեան գործերով, և տարին գէթ երկու
կամ երեք անգամ ընդհանուր ժողով գումարել,
որով նոյնպէս կարելի է աւելի յիշեցնել հասարա-
կութեանը ընկերութեան գոյութիւնը, ապա մի
քանի նկատողութիւններ արեց հաշիւ և արձա-
նագրութեան վերաբերմամբ: Վարչութիւնը հար-
կաւոր բացատրութիւններ տուեց այդ նկատու-
թիւնների առիթով:

Ժողովի խօսակցութեան զլսաւոր նեւթը դար-
ձաւ ձեռագործների ծրագիրը բայցանցնելու խն-
դիրը, որի առիթով վարչութեան անդամ-
ներէն երկու հոգի միայն տալ Բաբայան և
Լեւոնյան մի քանի խօսք ասեցին: Ընդհանուր
ժողովն այդ հարցի վերաբերմամբ համարեա մի-
աձայն ընդունեց տիկին Լ. Թամաշեանի հետե-
ւեալ առաջարկը՝ ցանկալի է, որ Հայուհեաց ըն-
կերութիւնը հակի, որ Թիֆլիսի օրիորդական
դպրոցներում ձեռագործի ուսումը լայն կերպով
գրվի, պարտաւորեցնել վարչութեան, որ նա մի-
շախի ձեռագործի համար նպատակաւորմամբ ծրա-
գիր, ապա այդ ծրագիրը ներկայացվի ընդհանուր
ժողովի քննութեան, որից յետոյ ներկայացվի
այնուպէս, ուր հարկն է՝ դպրոցներում գործածե-
լու համար Գրանից յետոյ նոյն տիկինը դիմեց
ընդհանուր ժողովին մի ուրիշ առաջարկով, որով-
հետեւ այս տարվայ վերջը, դպրոցական ընդուն-
ված կանոնով, հայոց դպրոցների վարժապետնե-
րը և վարժուհիները պէտք է ընտրվեն տան
վկայական ձեռք բերելու համար, և որովհետեւ հայ
վարժապետները և վարժուհիները մեծ մասամբ
չքաւոր մարդիկ են, ուրեմն կը դժուարանան ա-
ռանձին տուեցիչներ վարձել, ուստի վարժուհի-
ներին հնչուութիւն տալու համար՝ նա առաջար-
կեց, որ Հայուհեաց ընկերութիւնը նախահանդ
լինի, իրաւունք ստանայ և բաց անէ ամառը ձրի
կամ մատչելի կուրսեր՝ ուր վարժուհիները կա-
րող լինէին պատրաստվել: Սկզբունքով համակրե-
լով այս առաջարկին՝ վարչութեան անդամ տի-
կին Խաթիսեան այն կարծիքը յայտնեց, որ
դժուար թէ Ընկերութիւնը կարողանայ այդպիսի
մի գործի գլուխ անցնել, քանի որ դրա համար ա-
ռանձին իրաւունքներ են հարկաւոր: Ժողովը
վճռեց մի առանձին նիստ գումարել՝ յատկապէս
առաջարկը քննելու համար:

Նիստը փակվելուց առաջ ասելի ունեցաւ վար-
չութեան չորս փոխ-անդամների ընտրութիւնը:
Ընտրվեցան տ.ա. Միլեքեան, Բալանթար, Թուա-
նեան և օր. Ս. Արդութեան: Նիստը փակվեց
ժամը 3-ին:

«НОВОЕ ВРЕМЯ» ԼՐԱԳԻՐԸ ԱՂԱՄՍԱՆԻ ՄԱՍԻՆ

Արտատպում ենք ամբողջապէս «Нов. Время»
լրագրի հետեւալ յօդուածը Աղամանի մասին:
Պետերբուրգի արտոտապական ամենալաւ ոյժե-
րը ձայնակից եղան այն դժբաղդութեան, որին
ենթարկվեց իրանց հեռաւոր ընկերակից, հայ ող-
բերդու Պետրոս Երմիմովսեան Աղաման, որը Կ.
Պոլսում է ապրում այժմ Ալեքսիէի է մասնացոյց

